ՀՖՖ ՄԱՐԶՉԱԿԱՆ ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2026Թ.ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
Հոդված 1. Ընդհանուր դրույթները 3
Հոդված 2. Իրավական հիմքը 3
Հոդված 3. Հիմնական հասկացությունները 3
ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԶՉԱԿԱՆ ԱՐՏՈՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ 4
Հոդված 4. Մարզչական արտոնագրի գործողության ժամկետը 4
Հոդված 5. Պատասխանատվության միջոցների կիրառումը 4
Հոդված 6. Հետկանչի հետևանքները 4
ԳԼՈՒԽ 3. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ 5
Հոդված 7. Տեղեկատվության փոխանակումը և ՈՒԵՖԱ-ին ծանուցումը 5
Հոդված 8. Հաշվառումը 5
ԳԼՈՒԽ 4. ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ 6
Հոդված 9. Մարզիչների և հրահանգիչների վարքականոնները 6
Հոդված 10. Եզրափակիչ դրույթները 6
ՀԱՎԵԼՎԱԾ 1. Մարզիչների վարքականոն 7
ՀԱՎԵԼՎԱԾ 2. Հրահանգիչների վարքականոն 8

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Ընդհանուր դրույթները

1. Սույն Կանոնակարգը սահմանում է «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ «ՀՖՖ») կողմից ճանաչվող ՈՒԵՖԱ մարզչական դիպլոմների ու արտոնագրերի կառավարման, դրանց կարգավիճակի, մարզիչների և հրահանգիչների նկատմամբ կիրառված կասեցման հետևանքների, հետկանչի, հաշվառման և համապատասխան տեղեկատվության փոխանակման հատուկ կանոնները:
2. Սույն Կանոնակարգով կարգապահական վարույթի իրականացման առանձին կարգ չի սահմանվում: Կարգապահական խախտումների քննությունը, պատասխանատվության միջոցների կիրառումը և դրանց բողոքարկումն իրականացվում են ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգով սահմանված կարգով:
3. Սույն Կանոնակարգի գործողությունը տարածվում է ՀՖՖ-ի կողմից տրված կամ ճանաչված մարզչական դիպլոմ և/կամ արտոնագիր ունեցող անձանց, ինչպես նաև ՀՖՖ մարզչական կրթության ծրագրերում որպես հրահանգիչ ներգրավված անձանց վրա:

Հոդված 2. Իրավական հիմքը

4. Սույն Կանոնակարգը մշակվել է ՈՒԵՖԱ-ի Մարզչական կոնվենցիայի, ՀՖՖ կանոնադրության, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի, ինչպես նաև ՀՖՖ-ի այլ կիրառելի կանոնակարգերի և ներքին իրավական ակտերի հիման վրա:

Հոդված 3. Հիմնական հասկացությունները

5. Սույն Կանոնակարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

Մարզիչ՝ ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆուտբոլի կամ ֆուտզալի խաղացողների մարզման և զարգացման հետ կապված մարզչական գործունեություն և ունի ՀՖՖ-ի կողմից ճանաչված համապատասխան մարզչական որակավորում,

Հրահանգիչ՝ համապատասխան որակավորում ունեցող ֆիզիկական անձ, որը ՀՖՖ-ի կողմից ներգրավված է գործող և ապագա մարզիչների կրթության, գնահատման կամ մասնագիտական զարգացման գործընթացում,

ՈՒԵՖԱ մարզչական դիպլոմ՝ ՈՒԵՖԱ-ի Մարզչական կոնվենցիայի կողմ հանդիսացող ազգային ասոցիացիայի կողմից տրամադրված փաստաթուղթ, որը հավաստում է ՈՒԵՖԱ-ի մարզչական համապատասխան դիպլոմի դասընթացի հաջող ավարտը,

ՈՒԵՖԱ մարզչական արտոնագիր՝ սահմանափակ ժամկետով տրամադրվող թույլտվություն, որը ՈՒԵՖԱ մարզչական դիպլոմ ունեցող անձին իրավունք է տալիս մարզչական գործունեություն իրականացնելու Կոնվենցիայի համապատասխան կողմի տարածքում՝ այդ կողմի սահմանած մակարդակում,

Հետկանչ՝ ՀՖՖ-ի կողմից տրված ՈՒԵՖԱ մարզչական դիպլոմի և/կամ մարզչական արտոնագրի ուժի դադարեցում՝ ՀՖՖ իրավասու կարգապահական մարմնի որոշման կամ ՈՒԵՖԱ-ի իրավասու մարմնի պարտադիր որոշման կամ ՀՖՖ-ին ուղղված հանձնարարականի հիման վրա,

Հրահանգչի կարգավիճակ՝ ՀՖՖ մարզչական կրթության ծրագրերում որպես հրահանգիչ ներգրավվելու՝ ՀՖՖ-ի կողմից ճանաչված մասնագիտական կարգավիճակ:

ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԶՉԱԿԱՆ ԱՐՏՈՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Հոդված 4. Մարզչական արտոնագրի գործողության ժամկետը

6. ՀՖՖ-ն տրամադրում և երկարաձգում է մարզչական արտոնագրերը ՈՒԵՖԱ-ի Մարզչական կոնվենցիայի և ՀՖՖ-ի կիրառելի իրավական ակտերի համաձայն:
7. Մարզչական արտոնագրի գործողությունը պայմանավորված է արտոնագրի տիրոջ կողմից ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի կանոնադրությունների, կանոնակարգերի, հրահանգների և որոշումների պահպանմամբ, ինչպես նաև ՀՖՖ-ի կողմից սահմանված համապատասխան պայմանների կատարմամբ:
8. Արտոնագրի գործողության ժամկետը, երկարաձգումը և շարունակական մասնագիտական զարգացման պահանջները կարգավորվում են ՈՒԵՖԱ-ի Մարզչական կոնվենցիայով և ՀՖՖ-ի՝ մարզչական կրթության բնագավառում կիրառելի իրավական ակտերով:

Հոդված 5. Պատասխանատվության միջոցների կիրառումը

9. ՀՖՖ իրավասու կարգապահական մարմնի՝ կատարման ենթակա որոշման հիման վրա մարզչի և/կամ հրահանգչի նկատմամբ կարող է կիրառվել որոշակի գործառույթների կամ ծառայողական պարտականությունների իրականացումից կասեցում՝ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգով սահմանված կարգով և ժամկետով: Նույն մարմնի որոշմամբ կարող են հետ կանչվել միայն ՀՖՖ-ի կողմից տրված ՈՒԵՖԱ մարզչական դիպլոմը և/կամ մարզչական արտոնագիրը:
10. ՈՒԵՖԱ-ի իրավասու մարմնի՝ մարզչին կամ հրահանգչին կասեցնելու վերաբերյալ հանձնարարականը կատարվում է ՀՖՖ իրավասու կարգապահական մարմնի որոշմամբ: ՈՒԵՖԱ մարզչական դիպլոմի և/կամ արտոնագրի հետկանչը կարող է իրականացվել նաև ՈՒԵՖԱ-ի իրավասու մարմնի պարտադիր որոշման կամ ՀՖՖ-ին ուղղված հանձնարարականի հիման վրա՝ ՈՒԵՖԱ-ի Մարզչական կոնվենցիայի համաձայն:
11. ՀՖՖ Մարզչական կրթության բաժինը կարգապահական խախտման վերաբերյալ որոշում չի կայացնում, այլ ապահովում է ՀՖՖ իրավասու կարգապահական մարմնի որոշման՝ մարզչական դիպլոմի և արտոնագրի կարգավիճակին վերաբերող հետևանքների վարչական իրականացումը՝ համապատասխան հաշվառման համակարգում փոփոխություններ կատարելով և անհրաժեշտության դեպքում շահագրգիռ ստորաբաժանումներին տեղեկացնելով:
12. Ժամանակավոր միջոց կիրառելու անհրաժեշտության դեպքում կիրառվում են ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգով նախատեսված ժամանակավոր միջոցների վերաբերյալ դրույթները:

Հոդված 6. Հետկանչի հետևանքները

13. ՈՒԵՖԱ-ի մարզչական դիպլոմի և/կամ արտոնագրի հետկանչի դեպքում դրանցից բխող իրավունքները դադարում են հետկանչի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելու պահից, եթե այդ որոշմամբ ավելի ուշ ժամկետ սահմանված չէ:
14. Այն մարզիչը, որի ՈՒԵՖԱ-ի մարզչական դիպլոմը և/կամ արտոնագիրը հետ է կանչվել, հետկանչի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից առնվազն երեք տարի չի կարող մասնակցել ՈՒԵՖԱ-ի մարզչական դիպլոմի դասընթացի՝ համապատասխան դիպլոմը և/կամ արտոնագիրը կրկին ստանալու նպատակով:
15. Սույն Կանոնակարգի 14-րդ կետով սահմանված նվազագույն ժամկետի լրանալն ինքնին հիմք չէ մարզչին համապատասխան դասընթաց ընդունելու կամ նրան դիպլոմ և/կամ արտոնագիր կրկին տրամադրելու համար: Թեկնածուն պետք է բավարարի դասընթացին ընդունվելու պահին գործող ընդունելության բոլոր պահանջները:

ԳԼՈՒԽ 3. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Հոդված 7. Տեղեկատվության փոխանակումը և ՈՒԵՖԱ-ին ծանուցումը

16. ՀՖՖ-ն իրավասու է հարցում ներկայացնելու ՈՒԵՖԱ-ին կամ ՈՒԵՖԱ-ի Մարզչական կոնվենցիայի այլ կողմին և ստանալու տեղեկություն այն մասին, թե արդյոք մարզչի նկատմամբ նախկինում կիրառվել է որոշակի գործառույթների կամ ծառայողական պարտականությունների իրականացումից կասեցում, կամ հետ է կանչվել վերջինիս ՈՒԵՖԱ մարզչական դիպլոմը և/կամ արտոնագիրը:
17. ՀՖՖ-ն ՈՒԵՖԱ-ի Մարզչական կոնվենցիայով նախատեսված դեպքերում անհապաղ գրավոր տեղեկացնում է ՈՒԵՖԱ-ին մարզչական կրթության ազգային ծրագրին վերաբերող հարցերի և փոփոխությունների մասին, այդ թվում՝ մարզչի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու, որոշակի գործառույթների կամ ծառայողական պարտականությունների իրականացումից կասեցում կիրառելու կամ մարզչին ՀՖՖ-ի կողմից տրված ՈՒԵՖԱ մարզչական դիպլոմը և/կամ արտոնագիրը հետ կանչելու մասին:
18. Տեղեկատվության փոխանցումն իրականացվում է կիրառելի իրավական ակտերի, այդ թվում՝ անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ օրենսդրության պահանջների պահպանմամբ:

Հոդված 8. Հաշվառումը

19. ՀՖՖ-ն վարում է մարզչական դիպլոմների, արտոնագրերի և հրահանգիչների վերաբերյալ համապատասխան տվյալների բազա՝ ՈՒԵՖԱ-ի Մարզչական կոնվենցիայի պահանջներին համապատասխան:
20. Մարզիչների և/կամ հրահանգիչների նկատմամբ որոշակի գործառույթների կամ ծառայողական պարտականությունների իրականացումից կասեցման, մարզչական դիպլոմի և/կամ արտոնագրի հետկանչի, արտոնագրի գործողության ժամկետի ավարտի կամ երկարաձգման վերաբերյալ փոփոխությունները տվյալների բազայում գրանցվում են առանց անհարկի ուշացման:
21. ՀՖՖ-ն ՈՒԵՖԱ-ի պահանջով տրամադրում է ՈՒԵՖԱ-ի Մարզչական կոնվենցիայի կատարմանն առնչվող՝ Կոնվենցիայով նախատեսված տեղեկությունները:

ԳԼՈՒԽ 4. ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Հոդված 9. Մարզիչների և հրահանգիչների վարքականոնները

22. ՀՖՖ-ի կողմից ճանաչված մարզիչները պարտավոր են պահպանել ՀՖՖ-ի կողմից հաստատված Մարզիչների վարքականոնը (Հավելված 1), իսկ ՀՖՖ մարզչական կրթության ծրագրերում ներգրավված հրահանգիչները՝ Հրահանգիչների վարքականոնը (Հավելված 2):
23. Համապատասխան վարքականոնի խախտումը կարող է առաջացնել կարգապահական պատասխանատվություն, եթե տվյալ գործողությունը կամ անգործությունը համապատասխանում է ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգով նախատեսված խախտման հատկանիշներին:

Հոդված 10. Եզրափակիչ դրույթները

24. Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում ՀՖՖ Գործադիր կոմիտեի կողմից հաստատվելու պահից, եթե հաստատման որոշմամբ այլ ժամկետ սահմանված չէ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՄԱՐԶԻՉՆԵՐԻ ՎԱՐՔԱԿԱՆՈՆ

Սույն վարքականոնը սահմանում է ՀՖՖ-ի կողմից ճանաչված մարզիչների մասնագիտական և էթիկական վարքագծի հիմնական սկզբունքները:

Մարզիչները պարտավոր են՝

1. պահպանել արդար խաղի (fair play), ազնվության և սպորտային էթիկայի սկզբունքները մարզչական գործունեության բոլոր փուլերում,
2. հարգել խաղացողներին, մրցավարներին, գործընկերներին, պաշտոնատար անձանց, այլ մարզիչներին, հրահանգիչներին և ֆուտբոլային գործունեության մեջ ներգրավված այլ անձանց՝ զերծ մնալով վիրավորական, նվաստացուցիչ, ագրեսիվ, սպառնալիքային կամ այլ անթույլատրելի վարքագծից,
3. ապահովել անվտանգ, առողջ, ներառական և հարգալից մարզումային միջավայր՝ առաջնահերթություն տալով խաղացողների ֆիզիկական և հոգեբանական բարեկեցությանը,
4. պաշտպանել անչափահասների իրավունքները, անվտանգությունն ու բարեկեցությունը և պահպանել երեխաների պաշտպանության և անվտանգ միջավայրի ապահովման (safeguarding) կիրառելի սկզբունքներն ու պահանջները,
5. չկիրառել ֆիզիկական կամ հոգեբանական ճնշում, նվաստացուցիչ, վիրավորական կամ այլ անթույլատրելի վերաբերմունք խաղացողների կամ այլ անձանց, հատկապես՝ անչափահասների նկատմամբ,
6. չմասնակցել պայմանավորված խաղերի կազմակերպմանը կամ մրցումների մանիպուլյացիային, այդ թվում՝ անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար որևէ առավելություն չխոստանալ, չառաջարկել, չտրամադրել կամ չստանալ՝ մրցման ընթացքի կամ արդյունքի վրա ազդելու նպատակով, ինչպես նաև չկատարել ՀՖՖ կիրառելի իրավական ակտերով արգելված խաղադրույքներ և չօգտագործել կամ չփոխանցել ներքին տեղեկատվություն նման նպատակներով,
7. զերծ մնալ ռասիզմի, խտրականության, ոտնձգության կամ անհանդուրժողականության ցանկացած դրսևորումից,
8. պահպանել ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և այլ կիրառելի ֆուտբոլային մարմինների կանոնադրությունները, կանոնակարգերը, հրահանգները, որոշումները և պարտադիր պահանջները,
9. չչարաշահել մարզչական կարգավիճակը, պաշտոնը, հեղինակությունը կամ լիազորությունները և չօգտագործել դրանք խաղացողների կամ այլ անձանց նկատմամբ անհարկի ազդեցություն գործադրելու կամ անձնական, նյութական կամ այլ առավելություն ստանալու նպատակով,
10. մարզչական կրթության, արտոնագրման, արտոնագրի երկարաձգման, որակավորման ճանաչման և այլ պաշտոնական գործընթացներում ներկայացնել ճշգրիտ, ամբողջական և չապակողմնորոշող տեղեկություններ ու փաստաթղթեր,
11. շարունակաբար զարգացնել մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները և պատշաճ կերպով կատարել ՀՖՖ-ի և ՈՒԵՖԱ-ի կողմից սահմանված շարունակական մասնագիտական զարգացման պահանջները,
12. իրենց վարքագծով պահպանել և ամրապնդել ֆուտբոլի, ՀՖՖ-ի և մարզչական մասնագիտության հեղինակությունը, վստահելիությունն ու արժանապատվությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՀՐԱՀԱՆԳԻՉՆԵՐԻ ՎԱՐՔԱԿԱՆՈՆ

Սույն վարքականոնը սահմանում է ՀՖՖ մարզչական կրթության ծրագրերում ներգրավված հրահանգիչների մասնագիտական և էթիկական վարքագծի հիմնական սկզբունքները:

Հրահանգիչները պարտավոր են՝

1. պահպանել արդար խաղի, ազնվության, մասնագիտական էթիկայի և կրթական գործընթացի բարեվարքության սկզբունքները,
2. ուսանողների և կրթական գործընթացում ներգրավված այլ անձանց նկատմամբ ցուցաբերել հարգալից, արդար, անաչառ և հավասար վերաբերմունք՝ զերծ մնալով խտրական, վիրավորական, նվաստացուցիչ, ագրեսիվ, սպառնալիքային կամ այլ անթույլատրելի վարքագծից,
3. ապահովել անվտանգ, առողջ, ներառական և հարգալից կրթական միջավայր և անչափահասների հետ փոխգործակցության բոլոր դեպքերում պահպանել երեխաների պաշտպանության և անվտանգ միջավայրի ապահովման կիրառելի սկզբունքներն ու պահանջները,
4. չկիրառել ֆիզիկական կամ հոգեբանական ճնշում և չչարաշահել հրահանգչի, գնահատողի կամ մենթորի կարգավիճակը, պաշտոնը, հեղինակությունը կամ լիազորությունները՝ ուսանողի կամ այլ անձի նկատմամբ անհարկի ազդեցություն գործադրելու կամ անձնական, նյութական կամ այլ առավելություն ստանալու նպատակով,
5. ուսանողների գնահատումն իրականացնել օբյեկտիվ, հետևողական և թափանցիկ կերպով՝ հաստատված չափորոշիչների հիման վրա, և տրամադրել կառուցողական, մասնագիտական ու զարգացմանը նպաստող հետադարձ կապ,
6. անհապաղ բացահայտել իրական կամ հնարավոր շահերի բախումը և մինչև դրա կարգավորումը չմասնակցել համապատասխան գնահատմանը, որոշման ընդունմանը կամ այլ գործողությանը,
7. պահպանել կրթական գործընթացում հասանելի դարձած անձնական, մասնագիտական և գնահատման վերաբերյալ տեղեկատվության գաղտնիությունը, բացառությամբ կիրառելի իրավական ակտով նախատեսված կամ իրավասու մարմնի օրինական պահանջից բխող դեպքերի,
8. պահպանել մասնագիտական սահմանները ուսանողների հետ հարաբերություններում և չօգտագործել կրթական կամ գնահատման գործընթացը անձնական հարաբերությունների կամ ոչ մասնագիտական նպատակների համար,
9. գործել ՀՖՖ-ի հաստատված կրթական ծրագրերին, ուսուցման նպատակներին, գնահատման չափորոշիչներին և հրահանգչի համար սահմանված մասնագիտական պահանջներին համապատասխան՝ նպաստելով ուսանողների ինքնուրույն մտածողությանը և մասնագիտական զարգացմանը,
10. մարզչական կրթության, որակավորման, գնահատման և այլ պաշտոնական գործընթացներում ներկայացնել և օգտագործել ճշգրիտ, ամբողջական և չապակողմնորոշող տեղեկություններ ու փաստաթղթեր,
11. պահպանել ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և այլ կիրառելի ֆուտբոլային մարմինների կանոնադրությունները, կանոնակարգերը, հրահանգները, որոշումները և պարտադիր պահանջները,
12. շարունակաբար զարգացնել սեփական մասնագիտական և հրահանգչական գիտելիքներն ու կարողությունները և իրենց վարքագծով պահպանել ու ամրապնդել ֆուտբոլի, ՀՖՖ-ի և հրահանգչական գործունեության հեղինակությունն ու վստահելիությունը: